



**Առանձնահատուկ առաջարկ
Կասկադում**

*Վաճառվում է 73 քմ և 143 քմ
ընդհանուր մակերեսով, հիանալի
տեսարանով յուրահատուկ
բնակարաններ :*



Բիզնես Կենտրոնի Վաճառք
*Երևանի փոքր կենտրոնում
տեղակայված բացառիկ եռահարկ
շինություն՝ 679 քմ ընդհանուր
մակերեսով և 31 մ ապակեպատ
ճակատային հատվածով
գրասենյակային և առևտրային
տարածք:*



Հողատարածքի Վաճառք
*Վաճառվում է 1768 քմ
ընդհանուր մակերեսով և 15000քմ
գրասենյակային կառույցի
հաստատված նախագծով,
գերազանց բազմանպատակային
օգտագործման հողատարածք
խոշոր գործարար կենտրոնների
անմիջական հարևանությամբ:*

Ղեկտեմբերին կենտրոնում գները դեռ դիմադրում էին

Միջազգային շուկաների համաշխարհային ճգնաժամը իր բացասական ազդեցությունը թողեց նաև Հայաստանի անշարժ գույքի շուկայի վրա: Մրա վրա հիմնականում ազդեցին հետևյալ երկու գլխավոր գործոնները.

- Կրճատվել են արտասահմանյան ներդրումները
- Տեղական բանկերի կողմից հիփոթեքային վարկերի պահանջների խստացումը և տոկոսների կտրուկ աճը

Համայնքներ	Ղեկ/ 2007	Ղեկ/ 2008	Նոյ/ 2008
Կենտրոն	474,100	496,300	495,400
Արաբկիր	378,400	392,800	400,400
Զեյթուն	297,800	296,500	310,000
Նոր-Նորք	253,900	265,700	269,100
Շենգավիթ	264,000	270,300	278,300
Դավթաշեն	276,000	297,200	299,300
Մալաթիա	254,700	253,000	259,000

2008թ.-ի ղեկտեմբեր ամսին շարունակվեց Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայի միջին գների անկումը, գրեթե բոլոր համայնքներում, սակայն չենք կարող չնշել, որ Կենտրոնում բազմաբնակարան շենքերի բնակարանների միջին գները, համաձայն պաշտոնական վիճակագրության, մնացել են գրեթե անփոփոխ, ավելին՝ 2008թ.-ի ղեկտեմբերին սույն թվականի նոյեմբերի համեմատությամբ այդ ցուցանիշը աճել է 0.2%-ով, իսկ 2007թ ղեկտեմբերի համեմատությամբ՝ 5%-ով: 2008թ.-ի ղեկտեմբերին ամենակտրուկ անկումը տեղի ունեցավ Նուբարաշենում՝ 9%, իսկ գնային մինիմալ փոփոխությունը հանդիպեց Դավթաշենում և Նոր Նորքում՝ 1%: Եթե համեմատենք 2007թ.-ի և 2008թ.-ի ղեկտեմբեր ամիսները, ապա կտեսնենք, որ գնային աճը իր մաքսիմալ արժեքին

հասավ Նուբարաշենում՝ 10%,բայց հակառակը տեղի ունեցավ Մալաթիա-Սեբաստիայում, Քանաքեռ-Զեյթունում և Աջափնյակում, այդ համայնքներում 2007թ.-ի ղեկտեմբերի համեմատ գները նվազել են համապատասխանաբար 1%-ով, 0.4 %-ով և 2%-ով:

Իսկ եթե այժմ փորձենք խոսել Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առքուվաճառքի գործարքների քանակի մասին, ապա կարող ենք ասել, որ 2007թ. ղեկտեմբերի համեմատությամբ 2008թ. ղեկտեմբերին այդ գործարքների քանակը նվազել է 27.45%-ով: Բայց, 2008թ.-ի ղեկտեմբերը առքուվաճառքի գործարքների քանակի առումով տարվա ամենաառատ ամիսներից մեկն էր. 2008թ.-ին ամսական միջին հաշվով տեղի էր ունենում բնակարանների առքուվաճառքի մոտավորապես 659 գործարք, իսկ 2008թ. ղեկտեմբերին այդ ցուցանիշը գերազանցվել է և հասել է 732-ի: